## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

29 նոյեմբերի 2019 թվականի N 2877-Ա

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակել իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի պաշտոնակատար Լիանա Եղիազարյանին:
2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների գործընթացը՝ մամուլի հետ տարվող աշխատանքները, զանգվածային լրատվությունների միջոցների հետ համապատասխանաբար, հանդիպումների կազմակերպումը, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, հայտարարությունների, պարզաբանումների և աշխատանքային հանդիպումների կազմակերպման և նշվածի հետ կապված այլ գործողությունները համաձայնեցվում են իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի պաշտոնակատար Լիանա Եղիազարյանի հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 29.11.2019 15:05:44 GMT+4

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: AVAGYAN HAKOB 3912770166 Հ. ԱՎԱԳՅԱՆ